


Borghamita

Ապրիլ 27, 1953

Մեծայարգ
Տիար Բէրոբ Բէչոյեան
Ատենապետ Հողաբարձութեան
Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Պինկէմթըն:



Սիրելի Պր. Բէչոյեան,

Ստացած ենք Մարտ 23 թուակիր Ձեր գրութիւնը որով
կը տեղեկացնէիք թէ Ձեր ատենապետութեամբ տեղի ունեցած է
համայնքիդ հողաբարձական մասնակի ընտրութիւնը, եւ ներկայա-
ցնելով ընտրութեան արդիւնքը կը խնդրէիք վաւերացման պաշտօնա-
գիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով
ընտրուած են եւ ընտրողներու մեծ մասին վստահութիւնը կը վայելեն
իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձուէր եւ պարտաճանաչ անդամ-
ներ, կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը ըստ հետեւեալին.---

Տիար Բէրոբ Բէչոյեան
Մանուկ Պաղտասարեան
Արշամ Գրաճեան
Աւետիս Օհանեան
Մայքըլ Բէչոյեան
Ճիւան Սոկնալեան
Ճան Պաղտասարեան

Կ'օրհնենք նորընտիր հողաբարձուները եւ վստահ ենք
որ անոնք իրենց ջանքերը միացնելով պաշտօնի վրայ մնացող անդամ-
ներուն աշխատանքներուն պիտի զործեն Աստուծոյ փառքին եւ մեր
սուրբ Եկեղեցւոյն պայծառութեան համար: Մաղթելով կարողութիւն
եւ յաջողութիւն ի Տեառնէ

Մնամ հայրական սիրոյ ողջունիւ
աղօթարար

ԱՌԱՋՆՈՐԴ ԷԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ